ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03
«ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-19/11» ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք. Երևան 09.07.2019թ.
ժամը՝ 12:00

Հանձնաժողովի նախագահ՝
ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար (հանձնաժողովի նախագահ)՝ Գ. Ավետիսյան

Անդամներ՝
ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ֆինանսատնտեսական վարչության պետ՝ Ա. Հովհաննիսյան

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության նյութատեխնիկական ապահովման և գնումների բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ա. Շաբոյան

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ֆինանսատնտեսական վարչության գլխավոր մասնագետ՝ Լ. Միքայելյան

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ֆինանսատնտեսական վարչության առաջատար մասնագետ՝ Հ. Շեկոյան

Հանձնաժողովի քարտուղար՝
ՎԱ ԳԿ գնումների կազմակերպման բաժնի գնումների գործակալ՝ Ա. Պետրոսյան

1. «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-19/11» ծածկագրով մրցույթի հրավերի պահանջներին համաձայն որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին

1.1 Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրած տեղեկատվության, «Էկոմիքս» և «ՄԷՄԱ» ՍՊԸ-ները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունեն:
1.2 Գնահատող հանձնաժողովը բավարար գնահատեց ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ «Էկոմիքս» և «ՄԷՄԱ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հրավերով նախատեսված հիմնավորող փաստաթղթերը և ապրանքների տեխնիկական բնութագրի համապատասխանությունը հրավերով նախատեսված պահանջներին:
1.3 «Էկոմիքս» և «ՄԷՄԱ» ՍՊԸ-ները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չեն գնումների գործընթացին մասնակցություն չունեցող անձանց ցուցակում:
Գնահատման արդյունքները արտացոլվեցին գնահատման թերթիկներում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

2. «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-19/11» ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին

<u>Հանձնաժողովը որոշեց.</u>

2.1. Վարչապետի աշխատակազմի (Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի) կարիքների համար տնտեսական ապրանքների և կենցաղային նյութերի ձեռքբերման նպատակով

կազմակերպված «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-19/11» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի գնահատման արդյունքում ընտրված մասնակիցներ ճանաչել

- 2-րդ, 5-7-րդ, 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով՝ «Էկոմիքս» ՍՊԸ-ին:
- 4-րդ, 9-րդ և 12-րդ չափաբաժինների մասով՝ «ՄԷՄԱ» ՍՊԸ-ին:
- 1-ին, 3-րդ, 8-րդ և 13-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

2.2 Հաստատել ԳՀ ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

2.3 Մասնակիցների հետ համապատասխան չափաբաժինների մասով կնքել պայամանագրեր՝ անգործության ժամկետի ավարտից հետո:

2.4 Սույն ընթացակարգի համար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2.5 Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակիցներին անգործության ժամկետի ավարտից հետո առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի 10 (տասը) տոկոսի չափով՝ միակողմանի հաստատված հայտարարություն՝ տուժանքի կամ կանխիկ փողի, կամ բանկային երաշխիքի ձևով, որը ներկայացնելուց հետո սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

Նախագահ՝	Գ.Ավետսիյան	ԳՊ/ԳԱՊ
Անդամներ՝	Ա. Հովհաննիսյան	ԳՊ/ԳԱ
	Ա. Շաբոյան	ԳՊ/ԳԱ
	Լ. Միքայելյան	ԳՊ/ԲԱ
	Հ. Շեկոյան	ԳՊ/ԲԱ
Քարտուղար՝	Ա. Պետրոսյան	ԳՊ/ՄՀմ